Գիտություն

ԱՊՐԻԼ
№4
(386)
2024 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-Ն ԱՄՓՈՓԵՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի նախօրեին՝ ս/թ. ապրիլի 22-ին, կայացան ակադեմիայի Մաթեմատիկական և տեխնիկական, Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի, Բնական, Քիմիայի և Երկրի մասին, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները: Բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ Լենսեր Աղալովյանը, Ռադիկ Կոստանյանը, Ռուբեն Հարությունյանը, Լևոն Թավադյանը և Յուրի Սուվարյանը ներկայացրին բաժանմունքների 2023թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:

Զեկուցումների շուրջ ծավալվեցին քննարկումներ, ներկայացվեցին երկու տասնյակից ավելի գիտական ուշագրավ զեկուցումներ:

Սույն թվականի ապրիլի 23-ին ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը մեկնարկեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության բակում բացված «Գիտություն» ցուցահանդեսով, որին ներկայացված էին ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունները, ՀՀ պետական խոշոր ԲՈՒՀ-երը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ու ԳԱԱ գործընկերները: Ցուցահանդեսի մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին կյանքից հեռացած ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Վանիկ Զաքարյանի, Յուրի Ալեքսանյանի, Գևորգ Բաղդասարյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռաֆիկ Եդոյանի հիշատակը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ողջունեց ժողովի մասնակիցներին՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հակոբ Արշակյանին, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին, ԲՈՒՀ-երի ռեկտորներին, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներին, գիտնականներին, հյուրերին:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԳԱԱ համակարգում աշխատում է 3522 մարդ, այդ թվում՝ 2239-ը գիտաշխատող, որոնցից 277-ն ունեն գիտությունների դոկտորի, 1028-ը՝ թեկնածուի գիտական աստիճան: ԳԱԱ կազմակերպություններում ներկայում սովորում է 68 ասպիրանտ:

Ներկայացնելով 2023 թվականի գիտական գործունեության հիմնական արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց. «Հաշվետու տարում մեր հիմնական առաքելությունը պետք է լիներ Գիտությունների ազգային ակադեմիայի նոր կանոնադրության ընդունումը և դրա հիման վրա ակադեմիայի նախագահությունում և համակարգում բարեփոխումների իրականացումը: Սակայն դա կապված էր «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունման կամ «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» գործող օրենքում որոշ փոփոխություններ կատարելու հետ, ինչը, ցավոք, տեղի չի ունեցել, թեպետ դրա համար ակադեմիայի ղեկավարությունն իր լիազորությունների շրջանակներում արել է ամեն ինչ»: ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ 2023 թվականին տպագրվել է 1528 հոդված գրախոսվող ամսագրերում, որից 670-ը՝ արտասահմանում, 171 մենագրություն և ժողվածու, որից 19-ը՝ արտասահմանում: Ընդհանուր առմամբ, 2022 թվականի համեմատ 2023 թվականին նկատվում է հրապարակումների 3-5% աճ:

Խոսելով ՀՀ ԳԱԱ ֆինանսավորման մասին՝ Աշոտ Սաղյանը նշեց, որ ԳԱԱ բյուջետային և արտաբյուջետային ընդհանուր ֆինանսավորումը 2023 թվականին կազմել է 15 միլիարդ 445 միլիոն դրամ, ինչը 2022 թվականի համեմատ նվազել է մոտ 10 %-ով: «ԳԱԱ ֆինանսավորման ընդհանուր ծավալները 2019-2023 թվականներին աճել են 54 %-ով, ընդ որում բյուջետային ֆինանսավորման ծավալներն աճել են 65 %-ով»,- ասաց Աշոտ Սաղյանը:

2023 թվականին իրականացվել են 45 բազային ֆինանսավորման ծրագիր, 6 նպատակային ֆինանսավորման ծրագիր, 292 Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի դրամաշնորհային թեմատիկ ծրագիր, 192 տնտեսական պայմանագրային ծրագիր: 2023 թվականին ԳԱԱ ինստիտուտների կողմից կազմակերպվել են 72 միջազգային գիտաժողով, սիմպոզիում և այլ միջոցառումներ: Իրականացման ընթացքում են 77 միջազգային դրամաշնորհային ծրագրեր, այդ թվում՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի 5-ական նախագծեր:

Իր ելույթում ՀՀ ԳԱԱ նախագահը, անդրադառնալով ԳԱԱ կիրառական գործունեությանը, նշեց. «Պետք է փաստենք, որ կիրառական գործունեությունը համարվում է Գիտությունների ազգային ակադեմիայի և ընդհանրապես հայկական գիտության զարգացման թույլ կողմերից մեկը: 2023 թվականի ընթացքում ԳԱԱ կազմակերպությունները ստացել են ընդամենը 13 արտոնագիր: Իհարկե, գիտական արդյունքների հետագա առևտրայնացումը կախված է ոչ միայն հետազոտության առանցքը հանդիսացող գաղափարի արդիականությունից, այլ նաև ներդրման համար անհրաժեշտ կադրային, ֆինանսական, իրավական և տնտեսական ռեսուրսների առկայությունից, ինչպես նաև շուկայական պահանջարկից և շուկայում մրցունակ լինելուց: Այդ շղթայի տարբեր օղակների արդյունավետ փոխգործակցության բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանրապետությունում գիտական ներդրումային ծրագրերի զարգացման համար: Հայաստանում կիրառական գիտության արդյունավետության զարգացման անհրաժեշտության վերաբերյալ պետական գերատեսչությունների անտարբերությունն անընդունելի է: Արձանագրենք, որ վերջին երեք տարիների ընթացքում պետական գերատեսչությունների կողմից պահանջարկով պայմանավորված որևէ պատվեր չի իջեցվել Գիտությունների ազգային ակադեմիային»:

2023 թվականին ԳԱԱ-ն շարունակել է միջազգային համագործակցությունն արտասահմանյան գիտական կառույցների և գիտությունների ակադեմիաների հետ: Ստորագրվել են գիտական համագործակցության պայմանագրեր Չեռնոգորիայի, Մոլդովայի, Իրանի, Չինաստանի գիտությունների ակադեմիաների հետ: 2024 թվականին ստորագրվել են պայմանագրեր Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի, Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում կտրուկ ակտիվացել է ակադեմիայի գործունեությունը գիտության հանրամատչելիացման ուղղությամբ: Կազմակերպվում են գիտության հանրայնացմանն ուղղված միջոցառումներ՝ երիտասարդական դպրոցներ, ԲՈՒՀ-երի ուսանողների և ավագ դպրոցների աշակերտների համար գիտահանրամատչելի սեմինարներ, գիտության փառատոներ, հարցազրույցներ ակադեմիայի առաջատար գիտնականների հետ, հեռուստահաղորդումներ, դասախոսություններ մարզերում: «Գիտահանրամատչելի սեմինարների շարքում կուզենայի առանձնացնել Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ՝ Օգանեսոն քիմիական տարրի հայտնաբերող, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանի հանդիպումը Քիմիայի միջազգային 57-րդ օլիմպիադայի հաղթողների ու դպրոցականների հետ, ինչը մեծ արձագանք ստացավ աշակերտների շրջանում»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը խոսեց նաև ՀՀ ԳԱԱ նոր նախաձեռնությունների մասին՝ դրանցից առանձնացնելով գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառին վերաբերող հարցերի քննարկման բաց հարթակի, գիտական և գիտատեխնոլոգիական խոշորամասշտաբ ծրագրերի մշակման հարթակի, մասնագիտական պրոբլեմային խորհուրդների գործունեությունը և «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակի» հիմնումը: ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց նաև գիտության ոլորտի բարեփոխումների անհրաժեշտության մասին՝ նշելով փոփոխությունների հապաղման պատճառները: «Ինչո՞ւ են դանդաղում փոփոխություններն ակադեմիայում կամ ինչու՞ են պարբերաբար շեշտում, որ ԳԱԱ-ն «վատ» է աշխատում: Ես նման գնահատականի հետ համաձայն չեմ: Եթե ակադեմիան վատ է աշխատում, ապա ո՞վ է լավ աշխատում, ԲՈՒՀ-ե՞րը, միգուցե գերատեսչությունն՝ե՞րը, որոնք ամիսներով, հաճախ նաև տարի է տևում՝ չեն արձագանքում առաջարկություններին, նույնիսկ չեն պատասխանում գրություններին: Եկեք ընդունենք, որ ակադեմիան ուղղակի «ակտիվ չի աշխատում», և տեսնենք՝ ինչով է դա պայմանավորված:

Բարեփոխումներ նախագահությունում՝ հորիզոնական, կառուցվածքային, ինչու չեն արվում: Դրա համար անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ: Մենք մշակել ենք «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «ՀՀ ԳԱԱ կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, ՀՀ ԳԱԱ ակադեմիայի իսկական ու թղթակից անդամների պատվովճարի չափը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշումներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, «Գիտական և

➤2

ՀՀ ԳԱԱ-Ն ԱՄՓՈՓԵՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

➢1 գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ ԳԱԱ-ի մասով: Սակայն բոլոր նախաձեռնություններն էլ ընթացք չեն ստացել:

Բարեփոխումներ համակարգում սկսել ենք 2022 թվականին, այդ ժամանակ կառավարությունն առաջ էր տանում գերազանցության կենտրոններ ստեղծելու ռազմավարությունը: Մենք մշակել ենք 9-10 կենտրոնների ստեղծման նախագիծ: Սկզբում ուզել են երկուսը, ներկայացրել ենք նախագահության որոշում երկու կենտրոնների ստեղծման վերաբերյալ, սակայն դրանք նույնպես հետագա ընթացք չեն ստացել: Այս մասով մենք արել ենք այն ամենը, ինչ կախված էր մեզանից:

Արդեն 10-րդ տարին է՝ ակադեմիայի անդամների և թղթակից անդամների ընտրություններ չեն անցկացվում, դրա պատճառով ակադեմիայի անդամների թիվը երկու անգամ նվազել է, իսկ միջին տարիքը 79.1 տ է: Որևէ այլ երկրի ակադեմիայում նման բան չկա, բոլորն էլ ընդունված կարգով իրականացնում են ընտրություններ և պարբերաբար թարմացնում են համակարգը: Այս ճանապարհով ակադեմիան տարվում է դեպի սպառում: Հարց, արդյո՞ք դա է մեզ պետք: Իմ կարծիքով՝ ոչ, համոզված եմ՝ դուք էլ եք այդպես մտածում: 80 տարվա պատմություն ունեցող համակարգը պետք է պահպանվի, զարգացվի և ծառայեցվի երկրի զարգացմանն ու բարգավաճմանը»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահն անդրադարձավ նաև ՀՀ բարձրագույն կրթության և գիտության բնագավառների համար մեծ նշանակություն ունեցող «Ակադեմիական քաղաք» մեգանախագծին և դրանում Գիտությունների ազգային ակադեմիայի դերին: «ՀՀ պետական ԲՈՒՀ-երի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման գործընթացի մասին վերջերս ԳԱԱ ընդհանուր ժողովը հայտնել է իր դիրքորոշումը: Հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթության և գիտության զարգացման արդի փուլը, տասնամյակներով ձևավորված և արդեն իսկ կայացած ավանդույթներ ու միջազգային ճանաչում ունեցող գիտական դպրոցների պահպանման ու հետագա զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համաշխարհային փորձը՝ մենք գտնում ենք, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ապահովել **գիտական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանություն: ԲՈՒՀ-երը պետք է ունենան ժամանակակից գիտահետազոտական բաղադրիչ/միավորներ, սակայն պետք է լինեն նաև ինքնուրույն, առանձին գործող, հիմնականում գիտական և գիտատեխնոլոգիական գործունեություն իրականացնող կազմակերպություններ կամ դրանց համակարգեր:** Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նաև երկրի ռազմավարական և անվտանգային խնդիրներով:

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում գիտության և կրթության ինտեգրման առավել արդյունավետ և քիչ ռիսկային ու իրատեսական տարբերակն ըստ ԳԱԱ-ի հետևյալն է.

1. ակադեմիական քաղաքի կլաստերներում ԲՈՒՀ-երի հետ ինտեգրում/միավորում են այն պետական գիտական կազմակերպությունները և/կամ նրանց կառուցվածքային միավորները, որոնց գործունեությունը գերազանցապես համընկնում է տվյալ կլաստերի գործառույթների հետ (փոխադարձ համաձայնությամբ)

2. ռիսկային գործոնները հնարավորինս բացառելու նպատակով կլաստերների ձևավորումն իրականացվում է փուլային տարբերակով (պիլոտային ծրագրերի իրականացում)

3. ակադեմիական քաղաքի կլաստերների ձևավորմանը զուգահեռ ԳԱԱ համակարգում մասնագիտական գործունեության ոլորտներով մոտ գիտական կազմակերպությունների հենքի վրա ձևավորվում են գերազանցության գիտական կենտրոններ/ցանցեր, ինստիտուտներ ու միջազգային կազմակերպություններ (գլոբալ հետազոտական ուղղություններով մեկական կենտրոն), որոնք կարող են համագործակցել հանրապետության բոլոր ԲՈՒՀ-երի հետ

4. հանրապետության գիտական, տեխնոլոգիական և/կամ պաշտպանական խնդիրների լուծման համար ձևավորվում են հատուկ նշանակության գիտական/գիտատեխնոլոգիական կազմակերպություններ, որոնք գործում են վերոնշյալ երկու կառույցներից դուրս:

Այդպիսի մոտեցման դեպքում ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ինտեգրումը, համագործակցությունը հնարավոր է կազմակերպել ինտեգրման միջազգայնորեն ընդունված հետևյալ գործառույթների շրջանակում.

1. հիմնարար հետազոտությունների համատեղ ծրագրերի իրականացում՝ գիտական կենտրոնների/ինստիտուտների հետազոտական ծրագրերում ԲՈՒՀ-երի գիտական ներուժի և պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավմամբ և հակառակը

2. համատեղ գիտական/տեխնոլոգիական լաբորատորիաների/կենտրոնների ստեղծում ԲՈՒՀ-երում՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը միտված հետազոտություններ իրականացնելու նպատակով՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, ԳԱԱ-ի և ԲՈՒՀ-երի միջև պայմանագրերի հիման վրա

3. ԲՈՒՀ-երի բազային ամբիոնների ձևավորում գիտական կենտրոններում/ինստիտուտներում՝ առաջատար գիտնականների ղեկավարությամբ կոնկրետ գիտական և/կամ գիտատեխնիկական խնդիրների լուծման գործընթացներում ուսանողներին ներգրավելու նպատակով

4. գիտակրթական կլաստերների ձևավորում ըստ բնագավառների ու մասնագիտությունների՝ ԲՈՒՀ(եր)ի, գիտական կենտրոնների/ինստիտուտների, արտադրական ու տնտեսվարող սուբյեկտների, ըստ անհրաժեշտության նաև պետական կառավարման մարմինների ներգրավմամբ՝ ուսանողների հմտությունների զարգացմանն ու մասնագիտական ուղու ձևավորմանն աջակցելու նպատակով»:

Խոսելով 21-րդ դարի ԳԱԱ-ի տեսլականի մասին՝ Աշոտ Սաղյանը նշեց, որ կազմակերպահիրավական ձևի տեսակետից ակադեմիան պետք է մնա Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, որն իր կազմում միավորում է ակադեմիայի կազմակերպությունները, բաժանմունքները և անդամներին: Ակադեմիայի հիմնական գործառույթը պետք է լինի գիտության բոլոր բնագավառների լայն սպեկտրում հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացման ու հայագիտական հետազոտությունների համակարգումը, գիտական և գիտատեխնիկական փորձաքննության կազմակերպումն ու իրականացումը, պետական կառավարման մարմիններին փորձագիտական խորհրդատվության տրամադրումը, ազգային անվտանգության ամրապնդմանը միտված հետազոտությունների համակարգումն ու միջազգային գիտական և գիտատեխնոլոգիական համագործակցության զարգացումը:

«Մենք ուսումնասիրել ենք մի շարք առաջատար ակադեմիաների փորձը, ինչպես եվրոպական, այնպես էլ ԱՊՀ երկրների: Արդյունքում մշակել ենք ակադեմիայի արդիականացման տարբերակ՝ առավել լավ հարմարեցված մեր գիտության առկա վիճակին և ավանդույթներին: Այդ մոտեցման շրջանակում նախատեսվում է.

- փոփոխել ակադեմիայի կառավարման բարձրագույն մարմնի՝ ընդհանուր ժողովի ձևավորման կարգը՝ այն պետք է դառնա ավելի «բաց» և ընդգրկուն, ընդհանուր ժողովի մասնակիցների ցանկում անհրաժեշտ է ներառել նաև ակադեմիայի համակարգից դուրս գործող գիտական կամ գիտակրթական կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների և տնտեսության մասնավոր հատվածի ներկայացուցիչներ
- նախագահության կամ կառավարման խորհրդի կազմի մեջ պետք է ընդգրկված լինեն նաև գիտության, բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության, էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներ
- վերասահմանել ակադեմիայի հիմնական կառուցվածքային միավորի՝ բաժանմունքի ձևավորման և կառավարման կարգն ու լիազորությունները, բաժանմունքները պետք է խոշորացվեն ու ընդգրկեն գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 2 հարակից բնագավառների գիտական կազմակերպություններ և ԳԱԱ անդամներ
- ներդնել տարիքային սահմանափակում նախագահության անդամների և ԳԱԱ ղեկավար կազմի պաշտոններ զբաղեցնող անձանց համար, մասնավորապես, լիազորությունների դադարեցում, եթե լրացել է այդ անձի 75 տարին, ինչպես դա ընդունված է մի շարք պետությունների ակադեմիաներում
- սահմանել ակադեմիայի անդամության թեկնածուներին առաջադրվող շեմային պայմաններ՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության և կազմակերպել ԳԱԱ անդամների ընտրություն: Ընդ որում այդ չափանիշները պետք է որոշվեն գիտաչափական մեթոդներով, մշակվեն ԳԱԱ նախագահության/կառավարման խորհրդի ու ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ու հաստատվեն գիտության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից
- անհրաժեշտ է վերանայել նաև պատվավոր անդամների տրամադրման կարգը և ԳԱԱ նորընտիր անդամների համար կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նոր կարգը:

Ինչ վերաբերում է կառուցվածքին, ապա գործունեության ոլորտներով մոտ գիտական կազմակերպությունների հենքի վրա կարելի է ձևավորել գերազանցության գիտական կենտրոններ/ցանցեր, ինստիտուտներ (գլոբալ հետազոտական ուղղություններով մեկական կենտրոն), որոնք արդյունավետ կհամագործակցեն հանրապետական և միջազգային գիտական կամ գիտակրթական կազմակերպությունների հետ:

ԳԱԱ-ի առաջարկվող արդիականացումը, գործառույթների վերոնշյալ վերասահմանումն ու նոր անդամների ընտրությունները թույլ կտան նոր բովանդակություն ու որակ հաղորդել ակադեմիայի գործառույթներին՝ դարձնելով դրանք մեր ժամանակների ակադեմիայի հենքը»:

ՀՀ ԳԱԱ 2023 թվականի գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը:

«2023 թվականին ԳԱԱ ինստիտուտները կազմակերպել և անցկացրել են 72 միջազգային և 86 հանրապետական գիտաժողով: ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպություններն իրականացրել են գիտական և գիտատեխնոլոգիական աշխատանքներ 6 նպատակային-ծրագրային, 45 բազային, 192 տնտեսական պայմանագրային և 292 թեմատիկ դրամաշնորհային, այդ թվում՝ 77 միջազգային թեմատիկ ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 171 մենագրություն ու ժողովածու (27-ն արտասահմանում), 24 ուսումնական ձեռնարկ և դասագիրք, 1528 հոդված գրախոսվող ամսագրերում (670-ն արտասահմանում), 537 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (236-ն արտասահմանում), 652 թեզիս (285-ն արտասահմանում): Պաշտպանվել են 1 դոկտորական և 43 թեկնածուական ատենախոսություններ: 2023 թվականին ԳԱԱ կազմակերպությունները համագործակցության պայմանագրեր/հուշագրեր են կնքել 154 կազմակերպության հետ, այդ թվում՝ 105-ը ԳԱԱ համակարգից դուրս գործող կազմակերպությունների հետ, որոնցից 42-ը կնքվել են ԲՈՒՀ-երի, 30-ը տնտեսության մասնավոր հատվածի, 56-ն օտարերկրյա գիտական կազմակերպությունների հետ»,- իր ելույթում մասնավորապես ասաց Արթուր Իշխանյանը:

ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովին ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: «Ոչ ոք չի կարող մեզ արգելել կամ ստեղծել այնպիսի պայմաններ, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան գոյություն չունենա այն պարզ պատճառով, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետություն, չի կարող զարգացում ունենալ առանց գիտության և կրթության: Սա աքսիոմա է, որի իրականացումն այժմ կատարում են մեր երկրի գործող կառավարությունն ու իշխանությունը»,- ասաց ՀՀ նախագահը: Նա ներկայացրեց վիճակագրական տվյալներ, որոնց համաձայն՝ 2020 թվականին պետության կողմից գիտության ոլորտի ծախսերի ծավալը կազմել է 13 միլիարդ դրամ, 2024 թվականին նախատեսվում է ծավալը հասցնել 36 միլիարդի՝ բյուջեի ընդհանուր ծախսերի 1,12 տոկոսը: «ՀՀ գործող կառավարությունը, իշխանության ներկայացուցիչներն իրենց հիմնական նպատակը, գերխնդիրը համարում են գիտության և կրթության զարգացմանն առավելագույն կերպով նպաստելը: Այն, ինչ տեղի է ունենում զուտ ակադեմիայի կարգավիճակի հետ կապված քննարկումներում, պետք է շատ արագ ավարտվի, քանի որ անորոշությունն իր հերթին բերում է լրացուցիչ խնդիրներ ու խոսակցություններ, այլ կարծիքներ, որոնք նպաստավոր չեն թե՛ ➢3

ՀՀ ԳԱԱ-Ն ԱՄՓՈՓԵՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

►2

-տության, թե՛ ակադեմիայի համար:

ԳԱԱ-ում մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքները հուշում են, որ, իսկապես, տվյալ հաստատությունը փոխվելու մեծ ձգտում ունի, որի հիմնական նպատակն ավելի կիրառական մասնակցություն ունենալն է այսօրվա տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններում: Մենք պետք է կարողանանք դուրս գալ միջազգային շուկաներ, կարողանանք մեր գիտելիքն ու գիտական արտադրանքը ներկայանալի դարձնել միջազգային շուկայում: Անհրաժեշտ է հասկանալ, թե որտեղից պետք է սկսել այդ գործընթացը: Կարծում եմ՝ հենց կրթական համակարգից, հետևաբար՝ ավագ դպրոցների ու ինստիտուտների ամբողջ շղթան պետք է վերանայել ու գտնել շահագրգռող նոր մեխանիզմներ, որպեսզի ավելի մեծ թվով մարդիկ ձգտեն զբաղվել գիտությամբ»,- ասաց ՀՀ նախագահը:

Անդրադառնալով ակադեմիական քաղաք կառուցելու նախաձեռնությանը՝ Վահագն Խաչատուրյանն ասաց. «Ոչ ոք չի ուզում որևէ բան քանդել, առավել ևս իշխանությունը: Մենք ավելի շատ ունենք ինչ-որ բան ստեղծելու ցանկություն, ինչն անելու ենք համատեղ ջանքերով: Եթե իսկապես կան կառուցողական առաջարկներ ակադեմիական քաղաք հիմնելու համար, ապա պետք է միասին անցնենք այդ ճանապարհը: Ավելորդ աղմուկն ու չհիմնավորված կարծիքների հնչեցումն օգուտ չի տա այս գործընթացին: Եթե յուրաքանչյուր ԲՈՒՀ կարծում է, որ կարող է գոյատևել ինքնուրույն, ապա պետք է դա ապացուցի իր արդյունավետ գործունեությամբ: Այդ դեպքում միավորվել-չմիավորվելու հարցը կունենա այլ բնույթի քննարկում»:

ՀՀ ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը, պատասխանելով ՀՀ կառավարության անդամներին ուղղված «Գիտուժ» նախաձեռնության անդամ Գևորգ Սաֆարյանի հարցադրմանը, թե ինչով է պայմանավորված ՀՀ ԳԱԱ բարեփոխումները խոչընդոտելու գործելաոճը, ասաց. «Այնպես չէ, որ կառավարության անդամները, պետական այրերը միտված են որևէ քայքայիչ կամ խոչընդոտող գործողություններ կատարելուն: Եթե լիներ նման մտադրություն, այդ դեպքում չէր բարձրացվի գիտության ոլորտի ֆինանսավորումը, ինչպես որ չէր բարձրացվել նախորդ տասը տարիների ընթացքում և մնացել էր նույն մակարդակի վրա»: Անդրադառնալով ակադեմիական քաղաքի կառուցման նախագծին՝ Հակոբ Արշակյանը նշեց, որ այն ոչ թե ստեղծվում է ինչ-որ բանի փոխարեն, այլ ստեղծվում է թռիչքային զարգացում ապահովելու համար գիտության և կրթության ոլորտում: «Դա նշանակում է, որ ջանքերը պետք է մեկտեղվեն, և բոլոր շահագրգիռ կողմերը միասին բովանդակություն հաղորդեն այն ուղղություններին, որոնք պետության կողմից չափազանց կարևորվում են: Որևէ բան չի արվում այլ բանի հաշվին: Կառավարությունը, որդեգրելով Հայաստանն արդյունաբերական, բարձր տեխնոլոգիական պետություն դարձնելու տեսլական, ներդրումներ է անում գիտության ու կրթության և բարձրագույն կրթության մեջ, ուստի ակադեմիական քաղաքը մեծ և նոր քայլ է այդ ուղղությամբ, ինչը կապահովի լայնամասշտաբ էֆեկտ պետության համար»,-ասաց Հակոբ Արշակյանը:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վազգեն Մելիքյանը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն Ավետիս Ծատուրյանը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Մայա Գրիգորյանը:

Ելույթներին հաջորդեց ՀՀ ԳԱԱ մրցանակների հանձնման արարողությունը:

«Ժամանակակից տեխնոլոգիաները բժշկության մեջ» թեմայով գիտական զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Ռուսաստանի Դաշնության գիտության վաստակավոր գործիչ Արմաիս Կամալովը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ-ի և Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջև

Ս/թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Դուբնա քաղաքում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) և Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) միջև կնքվեց համաձայնագիր հիմնարար գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարության և կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Համաձայնագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը և ՄՀՄԻ-ի տնօրեն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գրիգորի Տրուբնիկովը:

Համաձայնագրով նախատեսվում է հիմնել Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համատեղ հետազոտական կառույց՝ ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների և ՄՀՄԻ-ի գիտնականների ու մասնագետների փոխգործակցությունը պահպանելու, գիտատեխնիկական բնագավառում, ինչպես նաև կադրերի պատրաստման ու բնագիտության հանրայնացման ոլորտում համագործակցությունը խորացնելու նպատակով:

Հիմնական հետազոտական ուղղություններն են տեսական ու փորձարարական ֆիզիկան, աստղաֆիզիկան, մոդելավորումն ու տվյալների մշակումը, միջուկային ֆիզիկայի մեթոդները որոնողական հետազոտություններում, առաջատար հետազոտությունները նոր նյութերի քիմիայի ոլորտում, կենսաբանական հետազոտությունները, ներառյալ ռադիոկենսաբանական երևույթների մոլեկուլային մեխանիզմների ուսումնասիրությունն ու տրեկային մեմբրաների մոդիֆիկացիան, երկրաֆիզիկան ու սեյսմոլոգիան, տեղեկատվական տեխնոլոգիաները: Նախատեսվում է նաև իրականացնել համատեղ մագիստրոսական ու ասպիրանտական ծրագրեր, նախագծերի ու գիտական հետազոտությունների արդյունքների փորձաքննություն:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հյուրընկալեց Վրաստանի Խորհրդարանի պատվիրակությանը

Ս/թ. մարտի 27-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը հյուրընկալեց Վրաստանի Խորհրդարանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերով հանձնաժողովի նախագահ Գիվի Միքանաձեի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցեց ՀՀ-ում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն:

Հյուրերին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: «Մենք ուրախ ենք ընդունել ձեզ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում: Մեր ժողովուրդների բարեկամությունը պատմական խոր արմատներ ունի: Այսօր բախվելով աննախադեպ գլոբալ մարտահրավերների՝ մենք գիտակցում ենք գիտության առանձնահատուկ դերը ոչ միայն մեր քաղաքակրթության կայուն զարգացման, այլև մեր մոլորակի վրա խաղաղության պահպանման գործում: Մենք բարձր ենք գնահատում ձեր ներդրումը միջազգային գիտական երկխոսության զարգացման գործում և ողջունում ենք դրա ընդլայնմանն ուղղված քայլերը»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Նա ներկայացրեց ՀՀ ԳԱԱ-ի գործունեությունը, Վրաստանի կազմակերպությունների հետ ունեցած համագործակցությունը:

Այդ համատեքստում Աշոտ Սաղյանն ընդգծեց էրազմուս+ ծրագրի շրջանակներում 2018 թվականից ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի մասնակցությամբ իրականացվող «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» ծրագիրը, 2023 թվականից ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի և վրացական «Գեոբիոֆերտ» ընկերության համագործակցությունը, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի և Վրաստանի գյուղատնտեսական համալսարանի համագործակցությունը՝ Միջազգային գիտության և տեխնոլոգիաների կենտրոնի (ISTC) 2 ծրագրերի շրջանակներում, 2022 թվականին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից Վրաստանին նվիրված մենագրության հրատարակումը:

Աշոտ Սաղյանը նշեց, որ անհրաժեշտ է ակտիվացնել համագործակցությունը ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, կենսաբանության ոլորտներում: «Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել եվրոպական գիտական ծրագրերին մեր երկրների գիտական կառույցների համատեղ մասնակցությանը, երիտասարդ գիտնականների համար համատեղ ծրագրերի մշակմանը և միջազգային միջոցառումների կազմակերպմանը»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Վրաստանի Խորհրդարանի հանձնաժողովի նախագահ Գիվի Միքանաձեն շնորհակալություն հայտնեց ընդունելության համար: Նա իր խոսքում մասնավորապես ասաց. «Ուրախ ենք, որ մեր երկու երկրների գիտությունների ակադեմիաների միջև կան լավ հարաբերություններ: 21-րդ դարում գիտության զարգացումը շատ կարևոր է, և եթե այս ոլորտը չզարգանա, շատ դժվար կլինի մեր երկրների զարգացումը: Դրա համար շատ ենք կարևորում գիտական տարբեր նախագծերի համար բյուջետային միջոցների ավելացումը և երիտասարդության ներգրավումը գիտության մեջ: Գիտենք, որ երկրները միայնակ ոչինչ չեն կարող անել, անպայման պետք է լինեն միջազգային հարաբերություններ և առաջին հերթին հարևանների հետ: Մենք պատրաստ ենք աջակցելու գիտական ծրագրերի իրականացմանը, համագործակցության խորացմանը»:

Ելույթներով հանդես եկան Վրաստանի Խորհրդարանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերով հանձնաժողովի անդամ Վլադեմեր Կախաձեն և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ ԱՊՐԻԼԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի ապրիլի 3-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արտահերթ ընդհանուր ժողովը: Օրակարգում ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման հարցի քննարկումն էր:

Ընդհանուր ժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: Նա նշեց, որ ընդլայնված ժողովը հրավիրվել է ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրենների առաջարկությամբ: ՀՀ ԳԱԱ նախագահը ներկայացրեց, որ մինչև 2022թ. կեսերը ՀՀ կառավարությունում զարգացվում էր Գիտությունների ազգային ակադեմիայի կազմում խոշորացված գերազանցության կենտրոնների ստեղծման ռազմավարությունը: «Կար որոշում յուրաքանչյուր տարի առնվազն երկու խոշորացված գերազանցության կենտրոն ստեղծել ԳԱԱ կազմում»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը: Նա նշեց, որ ՀՀ ԳԱԱ նախագահությունն ընդունել է երկու կենտրոնների ստեղծման որոշում և ուղարկել ԿԳՄՍ նախարարություն:

Այդ ժամանակ քննարկվում էր «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը, որում ևս նշված էր ԳԱԱ կազմում խոշոր կենտրոնների ստեղծման մասին: Սակայն այդ օրինագիծը ՀՀ կառավարությունում ընթացք չի ստացել: «Հետագայում հասկացանք, որ դա կապված էր ակադեմիական քաղաքի գաղափարի հետ»,- ասաց Աշոտ Սաղյանը: Նա նշեց, որ այնուհետև քննարկվում էր բուհերի և ԳԱԱ ինստիտուտների ինտեգրման հարցը: «Այդ ժամանակ նախարարությունն ընդունեց ԳԱԱ ներկայացրած տարբերակը կրթության և գիտության ինտեգրման վերաբերյալ: Գաղափարը փոխվեց աստիճանաբար, առաջ եկավ մասնակի միավորման, որից հետո միավորման գաղափարը, ստեղծվեց աշխատանքային խումբ, ես էլ էի ներգրավված»,- ասաց Աշոտ Սաղյանը: «Աշխատանքային խումբը մի քանի ամիս ակտիվ աշխատել է: ՀՀ ԳԱԱ-ն ներկայացրել է իր տարբերակը: Այնուհետև Գիտության կոմիտեն ներկայացրեց ակադեմիայի առաջարկի լրիվ հակառակ տարբերակը:

Մեր վերջին հանդիպումը եղել է 2023 թ. հունվարի 3-ին, երբ բուհերի հետ կապված ընդունվեց որոշում: Ինստիտուտների ինտեգրման հետ կապված հարցադրմանը եղավ արձագանք, որ կլինի լրացուցիչ քննարկում, կամ կառավարությունը կորոշի, թե որ առաջարկն է առաջ տանում: Դրանից հետո՝ մինչ օրս, որևէ քննարկում չի եղել: Սակայն վերջերս, վարչապետի հետ հանդիպման ժամանակ, քննարկվել են ակադեմիայում առկա խնդիրները և բարեփոխումների պլանը: Վարչապետը նշել է, որ դեռևս վերջնական քննարկում չի եղել, և վերջնական տարբերակ չկա»,- ասաց Աշոտ Սաղյանը:

Նա հայտնեց, որ այնուհետև ԳԱԱ-ն համակարգի ինստիտուտների գիտական խորհուրդների որոշումներով ընդունված դիրքորոշումների հիման վրա 76-էջանոց փաստաթուղթ է ուղարկել ԿԳՄՍ նախարարություն: Դրանից մոտ երկու շաբաթ հետո շրջանառության մեջ է դրվել փաստաթուղթ, որում արդեն ԳԱԱ ինստիտուտները բաշխված են ըստ կլաստերների, և ստեղծված են աշխատանքային խմբեր: Այդ աշխատանքային խմբերում ակադեմիան չի ներառվել: «Այսինքն, կարելի է ենթադրել, որ մեր ինստիտուտների առաջարկները չեն քննարկվել կամ չեն ընդունվել: Այդ ժամանակ մենք ստացանք ահազանգեր մեր տնօրեններից, առաջարկեցին հավաքվել, քննարկել և գալ ընդհանուր դիրքորոշման: Դրա համար հրավիրվել է այս արտահերթ ժողովը»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ ՀՀ ԳԱԱ-ում բարեփոխումներ անելու համար անհրաժեշտ են օրենսդրական և կանոնադրական փոփոխություններ, անհրաժեշտ է անցկացնել ՀՀ ԳԱԱ անդամների ընտրություններ: «Առնվազն 4 անգամ մենք դիմել ենք այդ հարցերով, սակայն ընթացք չի ստացել: Տարբեր երկրներում, այդ թվում՝ և եվրոպական, ես վերջերս շատ եմ եղել, տարբեր պետությունների ակադեմիաների հետ պայմանագրեր ենք կնքել, հանդիպել և խոսել եմ պետական լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ: Բոլորն էլ բարձր կարծիքի են հայկական գիտության, հայոց Գիտությունների ազգային ակադեմիայի մասին, հարգալից վերաբերմունք բոլոր պետություններում, բացի մեկ պետությունից»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի ավագ գիտաշխատող Գայանե Շագո-

յանը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Թոփուզյանը, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ Սահակյանը, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Հովակիմ Զաքարյանը, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի և գիտատեխնոլոգիական կենտրոնի ավագ գիտաշխատող Արփինե Հարությունյանը, պատմաբան Ալեքսան Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արթուր Իշխանյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշման նախագիծը: ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովն ընդունեց որոշման նախագիծը, որը հնչած առաջարկների հիման վրա կլրամշակվի և կդրվի շրջանառության մեջ:

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշումը «ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի մասին»

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) ընդլայնված ընդհանուր ժողովը,

- քննարկելով ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհեր) խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների փոխգործակցության հնարավորությունների հարցը,

- ենթադրելով, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրի ներդրումը կնպաստի ՀՀ-ում բուհական կրթության արդիականացմանն ու միջազգային մրցունակության բարձրացմանը,

- հաշվի առնելով ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների առաջարկությունները պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման գործընթացի վերաբերյալ,

- հիմք ընդունելով ՀՀ բարձրագույն կրթության և գիտության զարգացման արդի փուլը, տասնամյակներով ձևավորված և արդեն իսկ կայացած ավանդույթների ու միջազգային ճանաչում ունեցող գիտական դպրոցների պահպանման ու հետագա զարգացման անհրաժեշտությունը,

- հաշվի առնելով գործընթացի մասնակիցների/շահառուների լիարժեք համաձայնության բացակայությունը,

- հիմք ընդունելով գիտական և գիտակրթական բնագավառների կազմակերպման համաշխարհային փորձը,

համարում է՝

- տեղային ու աշխարհաքաղաքական իրողությունների ներկա պայմաններում գիտության և բարձրագույն կրթության ավանդական մոդելի կտրուկ ու արմատական փոփոխությունը նպաստավոր չէ երկու ոլորտների համար էլ,

- անթույլատրելի է բոլոր բուհերը և գիտական կազմակերպությունները մեկ վայրում կենտրոնացնելը ռազմավարական ու անվտանգային նկատառումներով,

- անհրաժեշտ է ապահովել գիտական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանություն. **բուհերը պետք է ունենան ժամանակակից գիտահետազոտական բաղադրիչ/միավորներ, սակայն պետք է լինեն նաև ինքնուրույն, առանձին գործող, հիմնականում գիտական և գիտատեխնոլոգիական գործունեություն իրականացնող կազմակերպություններ կամ դրանց համակարգեր**,

- ՀՀ պետական բուհերի խոշորացման ու արդիականացման ընթացքում չպետք է խաթարվեն Հայաստանի գիտության կայուն զարգացումն ու գիտատեխնոլոգիական առաջընթացը,

- նպատակահարմար է, որ ԳԱԱ գիտական կազմակերպությունների տնօրենների խորհուրդը քննարկի ակադեմիայի դիրքորոշումները «ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի» վերաբերյալ և դրանք ներկայացնի համապատասխան աշխատանքային խմբերին:

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում գիտության և կրթության ինտեգրման առավել արդյունավետ և քիչ ռիսկային ու իրատեսական տարբերակն է.

1. ակադեմիական քաղաքի կլաստերներում ինտեգրվում են այն բուհերը և գիտական կազմակերպությունները և/կամ դրանց կառուցվածքային միավորները, որոնց գործունեությունը գերազանցապես համընկնում է տվյալ կլաստերի գործառույթների հետ (փոխադարձ համաձայնությամբ),

2. ռիսկային գործոնները բացառելու նպատակով կլաստերների ձևավորումն իրականացվում է փուլային տարբերակով (պիլոտային ծրագրերի իրականացում),

3. ակադեմիական քաղաքի կլաստերների ձևավորմանը զուգահեռ ԳԱԱ համակարգում մասնագիտական գործունեության ոլորտներով մոտ գիտական կազմակերպությունների հենքի վրա ձևավորվում են գերազանցության գիտական կենտրոններ/ցանցեր, ինստիտուտներ ու միջազգային կազմակերպություններ (գլոբալ հետազոտական ուղղություններով մեկական կենտրոն), որոնք կարող են համագործակցել հանրապետության բոլոր բուհերի հետ,

4. հանրապետության գիտական, տեխնոլոգիական և/կամ պաշտպանական խնդիրների լուծման համար ձևավորվում են հատուկ նշանակության գիտական/գիտատեխնոլոգիական կազմակերպություններ, որոնք գործում են վերոնշյալ երկու կառույցներից դուրս:

Ինտեգրման վերը հիշատակված տարբերակը հնարավորություն կտա գիտական և գիտակրթական բնագավառներում ապահովելու և՛ կազմակերպման ձևերի բազմազանություն, և՛ գիտատեխնոլոգիական առաջընթացի զարգացման համար անհրաժեշտ մրցակցային պայմաններ:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համագործակցությունը հնարավոր է կազմակերպել/իրականացնել ինտեգրման հետևյալ գործառույթների շրջանակում՝

1. հիմնարար հետազոտությունների համատեղ ծրագրերի իրականացում՝ գիտական կենտրոնների/ինստիտուտների հետազոտական ծրագրերում բուհերի գիտական ներուժի և պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավմամբ և հակառակը,

2. համատեղ գիտական/տեխնոլոգիական լաբորատորիաների/կենտրոնների ստեղծում բուհերում՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը միտված հետազոտություններ իրականացնելու նպատակով, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, ԳԱԱ-ի և համատեղ միավորի տեղակայման բուհի միջև պայմանագրերի հիման վրա,

3. բուհերի բազային ամբիոնների ձևավորում գիտական կենտրոններում/ինստիտուտներում՝ առաջատար գիտնականների ղեկավարությամբ կոնկրետ գիտական և/կամ գիտատեխնիկական խնդիրների լուծման գործընթացներում ուսանողներին ներգրավելու նպատակով,

4. գիտակրթական կլաստերների ձևավորում՝ ըստ բնագավառների ու մասնագիտությունների՝ բուհ(եր)ի, գիտական կենտրոնների/ինստիտուտների, արտադրական ու տնտեսվարող սուբյեկտների, ըստ անհրաժեշտության նաև պետական կառավարման մարմինների ներգրավմամբ՝ ուսանողների հմտությունների զարգացմանն ու մասնագիտական ուղու ձևավորմանն աջակցելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից չափանիշներին համապատասխան բուհեր ձևավորելու/հիմնադրելու միջոցառումները պետք է մի կողմից միտված լինեն նոր ձևավորվող բուհերում ժամանակակից գիտահետազոտական միջավայր ապահովելուն ու գիտության արդի պահանջներին համապատասխան գիտակրթական գործառույթներ կազմակերպելուն («research-based education»՝ հետազոտությունների վրա հիմնված կրթություն), մյուս կողմից պետք է պահպանվեն ու զարգացվեն Հայաստանի գիտական ավանդույթները և նպաստեն միջազգային գիտական/գիտատեխնիկական տարածքում մեր գիտական կազմակերպությունների ձեռքբերումների և ուրույն տեղի պահպանմանն ու զարգացմանը:

Հաշվի առնելով Հայաստանի գիտական կազմակերպությունների և բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների արդի մակարդակը՝ գտնում ենք, որ ներկա իրավիճակում անհրաժեշտ է զարգացնել ԳԱԱ-ն՝ որպես գիտահետազոտական կազմակերպությունների համակարգ, որը մի կողմից համագործակցում է բուհերի հետ՝ ապահովելով գիտական արդյունքի ձեռքբերման և կրթության համար ակտիվ գիտական միջավայր, մյուս կողմից՝ պետական գերատեսչությունների ու տնտեսության մասնավոր հատվածի հետ՝ պետական գիտատեխնոլոգիական, այդ թվում՝ պաշտպանական, պատվերների ձևավորմանն ու դրանց կատարմանը մասնակցելու և տնտեսական շրջանառության մեջ գիտական արդյունքների ներդրումը խթանելու նպատակով:

Ակնկալում ենք պատկան մարմինների գործուն աջակցությունը ԳԱԱ կառուցվածքի ու կառավարման մեխանիզմների արդիականացմանը և գործառույթների արդյունավետության բարձրացմանն ուղղված ԳԱԱ առաջարկներին ընթացք տալու հարցում»:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Հայտնի են դարձել ՀՀ ԳԱԱ 2023 թ. մրցանակի հաղթողները

Ս/թ. ապրիլի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակի շնորհման և մրցանակաբաշխության աշխատանքները համակարգող խորհուրդը հայտարարեց ՀՀ ԳԱԱ 2023 թ. մրցանակի հաղթողների անունները:

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների հիմնարար հետազոտությունների բնագավառում շնորհվել է երկու մրցանակ՝ Նարեկ Սահակյանին, Սարգիս Գասպարյանին, Դավիթ Իսրայելյանին, Գևորգ Հարությունյանին՝ «Բարձր էներգիաների պրոցեսները բլազարների ռելյատիվիստական շիթերում» աշխատանքի համար և Արամ Սահարյանին, Վարդազար Քոթանջյանին՝ «Սահմաններով, տոպոլոգիայով և տարածության կորությամբ մակածված երևույթներ դաշտի տեսությունում» աշխատանքի համար:

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների կիրառական մշակումների բնագավառում մրցանակը շնորհվել է Վազգեն Մելիքյանին՝ «Նանոչափային տեխնոլոգիաներով կառուցվող ինտեգրալ սխեմաների նախագծման միջոցներ» աշխատանքի համար:

Քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների հիմնարար հետազոտությունների բնագավառում մրցանակը շնորհվել է Քրիստինե Մարգարյանին՝ «Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսներ. գենետիկայից մինչև գենոմիկա» աշխատանքի համար:

Քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների կիրառական մշակումների բնագավառում մրցանակը շնորհվել է Գայանե Ավետիսովային, Լուսինե Մելքոնյանին՝ «էկոբիոֆիդ+» էկոլոգիապես անվնաս կենսաբանական պարարտանյութի ստացման տեխնոլոգիայի մշակումը և դրա ներդրումը արտադրության մեջ» աշխատանքի համար:

Հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում մրցանակը շնորհվել է Հրանուշ Խառատյանին՝ «էթնոկերտման/ազգակերտման գործընթացները Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետություններում XX դարում- XXI դարասկզբին» աշխատանքի համար:

Մրցանակները շնորհվում են մեդալի, վկայագրի և դրամական պարգևի ձևով: Յուրաքանչյուր մրցանակի դրամական պարգևի չափը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Հիմնարար հետազոտությունների ոլորտում ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է վերջին 5 տարիների ընթացքում ձեռք բերված կարևորագույն հիմնարար գիտական արդյունքների, արժեքավոր գործի, հայտնագործության կամ աշխատանքների շարքի համար: Կիրառական մշակումների դեպքում ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է վերջին 10 տարիների ընթացքում ստացված գիտատեխնոլոգիական կամ գիտաարտադրական արդյունքների, ապրանքայնացման պատրաստ կամ ներդրված կիրառական մշակումների համար: ՀՀ ԳԱԱ մրցանակը ֆինանսավորում է «ՄԱՐՏԻՆ ՍԹԱՐ» ՍՊԸ-ն:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Անվանի գիտնական Արտեմ Օհանովը ՀՀ ԳԱԱ-ում աշակերտներին և ուսանողներին ներկայացրեց «Փաթիլների տեսությունը»

Ինչպե՞ս է առաջացել տիեզերքը, հետո երկրի վրա՝ ջուրը, ջրածնի և թթվածնի ատոմները, ինչպե՞ս գիտության մեջ հասնել հաջողության: Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանեց անվանի գիտնական, Սկոլկովոյի գիտության և տեխնոլոգիաների ինստիտուտի պրոֆեսոր Արտեմ Օհանովն ապրիլի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում աշակերտների և ուսանողների հետ ունեցած հանդիպման ժամանակ:

Հանդիպումն անցկացվեց «Գիտությունն այսօր» շարքի երրորդ՝ «Հավաքում ենք փաթիլ. ատոմներից դեպի մոլեկուլ և բյուրեղ» խորագրով սեմինարի շրջանակներում:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լևոն Թավադյանը: «Մենք շարունակում ենք Գիտությունների ազգային ակադեմիայում ստեղծված ավանդույթը՝ ծանոթացնելով ձեզ ականավոր գիտնականների հետ, որոնց գործունեության արդյունքում ստացված տվյալները մեծ ներդրում են գիտության մեջ»,- ասաց Լևոն Թավադյանը և ներկայացրեց պրոֆեսոր Օհանովի գիտական հայտնագործությունները:

Արտեմ Օհանովը հայտնի է նոր նյութերի համակարգչային դիզայնի և բյուրեղային կառուցվածքների կանխատեսման մեթոդների ստեղծման, ինչպես նաև բարձր ճնշումների քիմիայի և մոլորակի ընդերքի նյութի ուսումնասիրություններով:

«Ես միշտ հուզմունք եմ զգում, երբ գալիս եմ իմ նախնիների հայրենիք, այս զարմանալի հող, երկիր և դեպի այս զարմանալի ժողովուրդ»,- այսպես իր խոսքը սկսեց պրոֆեսոր Օհանովը:

Նա ներկայացրեց սառույցի բյուրեղային կառուցվածքը, թե ինչպես կենդանի օրգանիզմները սովորեցին կառավարել ջրի բյուրեղացումը, պատմեց նոր ուսումնասիրված տարրերի մասին և քիմիական փորձ կատարեց պատանիների, երիտասարդների մասնակցությամբ:

Արտեմ Օհանովը նաև պատմեց իր նախասիրությունների, ճանապարհորդությունների մասին, թե ինչպես է Հայաստանում բարձրացել Ուխտասար, ինչ տպավորություններ է ստացել «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, ինչպես է գիտական փորձեր անցկացնում երեխաների հետ միասին իր ամառանոցում ստեղծված լաբորատորիայում, նաև խոսեց գիտության մեջ հաջողության հասնելու իր փորձի մասին:

«Ուսանողական տարիներին եղել են դժվարություններ, եղել է նաև շատ ծանր շրջան: Բայց գիտությունը հրաշալի է, աշխատանքն էլ՝ շատ հետաքրքիր, ես երբեք չեմ մտածել գիտությունից հեռանալու մասին: Նայեք աշխարհին հարցական նշանով, և կյանքն ավելի հետաքրքիր կդառնա,- ասաց Արտեմ Օհանովը և հավելեց,- հավատացե՛ք ինքներդ ձեզ, կլինեն պարտություններ և հաղթանակներ, բայց հաղթանակները չպետք է գլխապտույտ առաջացնեն, իսկ պարտությունները՝ կոտրեն: Եթե կարողանաք ճիշտ վերաբերվել կյանքին, ունենաք ներքին ուժ և մղում, ձեզ մոտ ամեն ինչ կստացվի»:

Արտեմ Օհանովը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պրոֆեսոր է, Մոսկվայի ազգային հետազոտական տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր, Եվրոպայի ակադեմիայի իսկական անդամ, Քիմիայի Թագավորական ընկերության իսկական անդամ, Ամերիկյան ֆիզիկական ընկերությունների իսկական անդամ: 2008-2017 թթ.-ին նա եղել է Նյու Յորքի Սթոուն Բրուքի համալսարանի նյութերի համակարգչային դիզայնի լաբորատորիայի ղեկավար: Արտեմ Օհանովը «Ֆորբս» ամսագրի կողմից ընդգրկվել է «Աշխարհը նվաճած 50 ռուսաստանցիների» ցանկում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը լույս է ընծայել «Ohannes Tchekidjian: Life and Career» աշխատությունը

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Ohannes Tchekidjian: Life and Career» աշխատությունը: Այն նվիրված է ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երկարամյա գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 95-ամյակին: Աշխատության խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը:

Աշխատության մեջ անգլերենով առաջին անգամ ներկայացվել են Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու կատարողական արվեստը, բացահայտվել են Չեքիջյան խմբավարի ներդրումը հայ խմբերգային արվեստի զարգացման գործում, Մաեստրոյի խմբավարական և դիրիժորական արվեստի կատարողական առանձնահատկությունները: Ներկայացվել է Հովհաննես Չեքիջյանի վաստակը հայ ժամանակակից երաժշտության կատարման և հանրահռչակման գործում, լուսաբանվել են Հովհաննես Չեքիջյանի համերգային շրջագայությունների լենինգրադյան և ֆրանսիական էջերը:

Հեղինակը կազմել է Հովհաննես Չեքիջյանի մասին առկա մատենագիտությունը, գիտական շրջանառության մեջ դրել Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի արխիվում և Հովհաննես Չեքիջյանի անձնական արխիվում պահվող կարևոր վավերագրեր՝ համերգների հայտագրեր, ծրագրեր, փաստաթղթեր, համերգների վերաբերյալ գրախոսականներ:

«Հովհաննես Չեքիջյանն այսօր հայ կատարողական արվեստում եզակի և անգերազանցելի խմբավար է, փայլուն դիրիժոր: Չեքիջյանի շնորհիվ նոր մակարդակի է բարձրացել երաժշտական կյանքի որակը Հայաստանում: Մաեստրոն դարձել է բազմաթիվ ստեղծագործությունների առաջին ու անգերազանցելի մեկնաբանը: Նրա շնորհիվ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբն իր կատարողական վարպետությամբ դարձել է հայկական խմբերգային արվեստի գագաթը: Նրա ղեկավարությամբ կապելլան բնագրի լեզվով՝ 27 լեզուներով կատարել է ավելի քան 700 ստեղծագործություն, այդ թվում՝ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ շուրջ 40 ստեղծագործություն»,- նշեց Աննա Ասատրյանը:

Աշխատության մեջ Արամ Խաչատրյանի «Զոն ցնծության» ստեղծագործության չեքիջյանական մեկնաբանության ուսումնասիրության օրինակով ներկայացվել է Չեքիջյանի վաստակը հայ ժամանակակից երաժշտության կատարման և հանրահռչակման գործում: Ներկայացվել են նաև Չեքիջյանի գործունեությունը Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը ղեկավարելու տարիներին, նրա արդյունավետ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի հետ: ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Հովհաննես Չեքիջյանը ՀՀ ԳԱԱ հիմնի առաջին կատարողն է և դեռևս միակ մեկնաբանը:

«Ուսումնասիրության արդյունքները կարող են հուսալի հիմք դառնալ Հովհաննես Չեքիջյանի կատարողական գործունեության հետագա հետազոտությունների համար, ինչպես նաև ընդգրկվել հայ կատարողական արվեստի պատմության բուհական դասընթացներում և օգտագործվել որպես ուսումնական ձեռնարկ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում»,- ասաց Աննա Ասատրյանը:

Աշխատությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«Հայաստանը՝ որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ» միջազգային գիտաժողովը

Վերջերս ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Հայաստանը՝ որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ» թեմայով եռօրյա միջազգային գիտաժողովը, որի նպատակն էր քննարկել հայոց պետականության դերը տարածաշրջանում, Հայաստանի առնչությունները հարևան պետությունների և ժողովուրդների հետ:

Գիտաժողովին մասնակցեցին պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, գիտնականներ ԱՄՆ-ից, Բելառուսից, Գերմանիայից, Եգիպտոսից, Իտալիայից, Իրանից, Հնդկաստանից, Հունաստանից, Հունգարիայից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Չինաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը. «Հայոց պատմության վերաբերյալ պատկառելի ժառանգություն է ստեղծվել, արձանագրված են լուրջ ձեռքբերումներ: Բազմապատկված մարտահրավերների պայմաններում զգալիորեն ավելացել են հակագիտական դրսևորումները: Գիտաժողովի ընթացքում, համոզված եմ, վեր կհանվեն և կբացվեն նոր շերտեր Հայաստանի ու հայ ժողովրդի հարևան պետությունների ու ժողովուրդների հետ առնչություններում, կկարևորվի հայոց պետականության խաղացած դերը տարածաշրջանում, ըստ արժանվույն կգնահատվեն հայ ժողովրդի դերն ու ազդեցությունը տարածաշրջանի պետությունների պատմության, մշակույթի բնագավառներում: Համոզված եմ, որ ՀՀ ԳԱԱ-ի կողմից ստեղծված «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը կշարունակի այլ գործընկերների հետ համագործակցությամբ կազմակերպել նման օգտաշատ գիտական միջոցառումներ»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Դումանյանն ընթերցեց ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի ուղերձը, որում մասնավորապես նշված է. «Հայաստանն այսօր գտնվում է բարդ պատմական ժամանակաշրջանում և ոչ պակաս բարդ իրադարձությունների կիզակետում: Այս տեսանկյունից նման համաժողովները նոր ելքեր ու հայեցակարգեր գտնելու լավագույն հնարավորություններից են, քանի որ ես համոզված եմ՝ գիտությունը կարող է լինել ցանկացած խնդրի, խոչընդոտի և հակամարտության հաղթահարման, ինչպես նաև զարգացման նոր հեռանկարների բացահայտման, քաղաքակրթական համերաշխության ապահովման երաշխավորված բանալին»:

Ողջույնի խոսքով և ելույթներով հանդես եկան ՀՀ վարչապետի օգնական Հակոբ Աբրահամյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Գարդման-Շիրվան-Նախիջևան» համահայկական միության նախագահ Վիլեն Գաբրիելյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոռ Ծառուկյանը, «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը:

«Այսօր ամբողջ աշխարհում, մասնավորապես մեր տարածաշրջանում տեղի են ունենում գործընթացներ, որոնք շատ մտահոգիչ են: Տեղի է ունենում պատմական իրադարձությունների, փաստերի կեղծման, ձևափոխման կազմակերպված քաղաքականություն: Փորձ է արվում յուրացնելու, օտարելու տեղաբնիկ ժողովուրդների պատմությունն ու մշակույթը: Կարծում եմ՝ դա միայն պարզ կեղծարարություն չէ, այլ նաև քաղաքակրթական արժեքների դեմ իրականացված հանցագործություն, փորձ՝ ձևախեղելու նաև սերունդների հիշողությունը, պատմական ժառանգությունը: Գիտաժողովի խնդիրներից է նաև վեր հանել և քննարկել նման դեպքերը»,- ասաց Ռոբերտ Ղազարյանը:

Եռօրյա գիտաժողովի ընթացքում Հայաստանի և արտերկրի առաջատար գիտնականները հանդես եկան զեկուցումներով՝ ներկայացնելով Հայաստանն աշխարհաքաղաքական իրադարձությունների, տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական, քաղաքական և քաղաքակրթական դինամիկայի շրջանակներում, կրոնական և էթնիկ խմբերի փոխազդեցությունը Կովկասում և տարածաշրջանում, հայկական մշակութային ժառանգության և գլոբալ ազդեցության ուսումնասիրությունը, Հայաստանը և քաղաքակրթական փոխառնչությունները:

Միջազգային գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը, «Օրբելի» կենտրոնը և Երևանի պետական համալսարանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

Պատմությունը սխալ հունով ընթացավ...

(Քրդական գործոնն օգտագործելու թուրքական խորամանկ ձեռագիրը)

Պատմական անցյալը խմբագրել, փոխել ու շտկել այլևս չի լինի կամ անկարելի է: Բայց պատմության դասերը յուրացնելու և իմաստավորելու անհրաժեշտությունը միշտ զգացվում է և միշտ առկա է ու կենսունակ:

Այո՛, անցյալն այլևս սրբագրել չի լինի, բայց միշտ ու մշտապես պատմության մեծ ու փոքր «ինչո՞ւ»-ներին արձագանքելու անհրաժեշտությունը մնում է օրակարգայի՛ն ու հրատա՛պ: Պատմության այդ մեծագույն «ինչո՞ւ»-ներից մեկը կապված է հայ և քուրդ ժողովուրդների պատմության հետ:

Այս երկու ժողովուրդները տեղաբնիկ են և պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին: Նրանք ապրում էին իրենց պատմական տարածքներում և հնուց ի վեր հարևաններ էին և լավ հարաբերություններում մեջ: Բայց եկան քոչվոր ու բարբարոս թուրքերը, ձևավորեցին ռազմաֆեոդալական՝ միմիայն բիրտ ուժի վրա հենված (առա՛նց տնտեսության և մշակույթի) պետություն և փորձեցին ստրկացնել տեղաբնիկ ժողովուրդներին:

Իսկ ստրկացնելու և հլու-հնազանդ դարձնելու համար նախևառաջ պետք էր միմյանց հակադրել նրանց, պառակտել այդ ժողովուրդների հնարավոր դաշինքն ու միասնությունը: Եվ թուրքական կայսրության տիրակալներին հաջողվեց այն իրականացնել:

Հայ և քուրդ ժողովուրդներին պառակտելու և թշնամացնելու գործընթացի ջատագովն ու ճարտարապետը եղավ սուլթան Աբդուլ Համիդը (1879-1908 թթ.): Նա գործի դրեց թուրքական պետական մեքենան Արևմտյան Հայաստանում՝ իր հայրենիքում, հայության արմատական բնաջնջման քաղաքականությունն իրագործելու համար: Սուլթան Համիդը, ըստ գերմանացի հետազոտող Հ. Ֆիրբյուխերի դիպուկ արտահայտության, պատմության ամենից մութ անձնավորություններից մեկը, քաջ գիտակցում էր, որ քրդական սեպով մահացու հարված կհասցնի հայությանը: Քրդերին հայության դեմ տրամադրելու առաքելությամբ 1879 թվականին Կ. Պոլսից Վան գործուղվեց սուլթանական բարձրաստիճան մի պաշտոնյա՝ Բեքիր Սամի բեյը, որի առջև խնդիր էր դրված. «Հայոց ազգութիւնը ճնշելու... մի նոր հնարագետ, արտաքուստ չը երևացող և արագ գործադրելի նախագիծ մշակելու և իսկոյն գործի դնելու» (Լեո, «Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը», Փարիզ, 1934 թ., հատոր Ա, էջ 117):

Սամի փաշան կարողացավ իրականացնել սուլթանի մշակած նենգ ու ստոր դավադրության ծրագիրը: Դրա առանցքը համիդեական զինված գնդերի կազմավորումն էր, որի նպատակը, ըստ էության, հայության բնաջնջման գործընթացի անխափան ապահովումն էր:

Ֆրանսիացի հետազոտող Ֆրեդերիկ Մակլերը, անդրադառնալով «համիդիե» գնդերի ստեղծմանը, կարևորում է այն միտքը, որ դրանով սուլթանական վարչակարգը ջանում էր խափանել Առաջավոր Ասիայի երկու տեղաբնիկ ժողովուրդների՝ հայերի ու քրդերի մերձեցման բնականոն գործընթացը:

19-րդ դարի վերջերին քրդական ցեղերի մեծ մասը, շնորհիվ օսմանյան իշխանությունների թափած ջանքերի, արդեն ծանոթ էին կատարելագործված զենքերին և դրանց գործածությանը:

Համիդեական գնդերի հրամանատարներ նշանակվեցին ամենամոլի հայատյաց ու սանձարձակ քուրդ բեյերը, որոնք գտնվում էին սուլթանի հսկողության ներքո: Այդ ժամանակ արևմտահայկական գավառներում հակահայ գործողություններով հայտնի էր դարձել ավազակապետ Մուսա բեկը, որը ևս բացահայտ հովանավորվում էր սուլթանական իշխանության կողմից: Չնայած եվրոպական երկրների դեսպանների ճնշման ներքո Մուսա բեկը տարվեց Կ. Պոլիս և դատի տրվեց, սակայն սուլթանի հրահանգով վերջինս արդարացվեց: Ուշագրավ է, որ դատական ֆարսի ընթացքում ավազակապետը սպառնացել էր Բարձր դռանը, որ եթե ինքը դատապարտվի, ապա այնժամ հրապարակելու է այն բոլոր նամակները, որոնցով Վանի, Բիթլիսի և Կարինի (Էրզրում) նահանգապետ-փաշաները նրան դրդել էին մղել այդ արշավանքները հայերի դեմ: Այդ օրերին հայկական և եվրոպական մամուլը պարզորոշ արձանագրեց, որ Մուսա բեկի գործակիցը թուրքական կառավարությունն է:

«Համիդիե» գնդերի զինվորներին և հրամանատարներին քաղաքացիական դատարանները դատելու իրավունք չունեին: Ամեն ինչ արվում էր՝ քրդերին ներշնչելու այն միտքը, որ իրենք լիովին անպատիժ կմնան հայկական բնակավայրերն ավերելու և հայերի ինչքն ու ունեցվածքը թալանելու բոլոր տեսակի գործողությունների համար:

Եվ թուրքական իշխանություններին հաջողվեց քաղաքականապես ու գաղափարապես ոչ հասուն քրդական զինված և անզեն ամբոխին մինչև ուղն ու ծուծը ներարկել հակահայկական թունավոր հիստերիայով: Մթնոլորտը օրեցօր շիկանում էր, տագնապը՝ սաստկանում: 1890-ական թվականներին սարսափն ու լարվածությունն արևմտահայկական գավառներում հասել էին ծայրաստիճան շիկացման:

Թեպետ որոշ քրդական ցեղապետեր հասկացել էին, որ հայերից հետո գալու էր քրդերի հերթը, բայց նրանց ձայնն այս ընդհանուր մթնոլորտում լսելի ու վճռորոշ չեղավ: Հետագայում ևս հայ և քուրդ առանձին գործիչներ մշտապես փորձել են երկու ժողովուրդների միջև ձևավորել հաշտության ու բարիդրացիական մթնոլորտ, սակայն թուրքական իշխանությունները կարողացել են խափանել այդ ջանքերն ու փորձերը: Հայոց ազգային գործիչներից հայ-քրդական ջերմ համերաշխության կողմնակիցներն էին Խրիմյան Հայրիկը, Մկրտիչ Փորթուգալյանը, Զորավար Անդրանիկը, Գևորգ Չաուշը և ֆիդայական գործիչներից շատերը: Քուրդ գործիչներից ևս եղել են առանձին անհատներ, որոնք ջատագովել են հայ-քրդական միությունն ու բարեկամությունը: Այդպիսի գործիչներից էր Մոկսի քուրդ ազդեցիկ ցեղապետ Մուրթուլլա բեկը, որը հաստատապես կանգնած էր այդ գավառի հայության կողքին: Նա այդպիսի ազնիվ ու համարձակ դիրքորոշում ունեցավ նաև 1915 թվականի եղերական օրերին՝ պաշտպանելով մահվան երախը քշվող իր հայ հայրենակիցներին:

Այնուամենայնիվ, թուրքական իշխանություններին հաջողվեց բնաջնջել և արտաքսել հազարամյակներ շարունակ իր հայրենիքում ապրած հայ ժողովրդին:

Հայերից հետո թուրքական պետությունն օրակարգում դրեց քուրդ ժողովրդի ոչնչացման հարցը: Հայերին բնաջնջելուց հետո արդեն բազմաթիվ տասնամյակներ թուրքերը ձգտում են ազատվել քրդական հարցից՝ նույնպես բնաջնջման ճանապարհով: Բարեբախտաբար առայժմ դա նրանց չի հաջողվում, քուրդ բազմամիլիոնանոց ժողովուրդը դիմադրում և դիմակայում է բոլոր ձևերով:

Բայց թուրքի նենգությունն ու համառությունը նույնպես ակնհայտ են, նա բնավ չի նահանջելու հետապնդած նպատակներից: Այնպես որ քուրդ ժողովրդին, քրդական ազգային-ազատագրական շարժմանը տևական լուրջ փորձություններ ու մարտահրավերներ են սպասվում:

Կարծում ենք, որ 21-րդ դարում հայ և քուրդ դրացի ժողովուրդները վերջնականապես կյուրացնեն պատմության դասերը: Այն հաշվով, որ էլ երբեք չկրկնվեն նախկինում թույլ տված սխալները: Պատմության ծանր, աղետալից սխալները չպետք է կրկնվեն հետայսու:

Նույն լեզվաընտանիքին պատկանող, պատմաաշխարհագրական առումով, հոգեկան կերտվածքով, մշակույթով ու պատմությամբ իրար մոտիկ ու հարազատ այս երկու ժողովուրդները պարտավոր են պատմական անցյալից անհրաժեշտ եզրահանգումներ անել:

Ինչևէ, պատմության սխալ ընթացքը հնարավոր է շտկել, ուղղել երկու ժողովուրդների համատեղ ուժերով: Դա ժամանակին հասկացել, զգացել և ըմբռնել են հայ և քուրդ ժողովուրդների լավագույն ներկայացուցիչները:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ լրագրողների միության անդամ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ ԵՎ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Ծննդյան երկու 110-ամյակ

Խորապես անհատական գրական դեմք ու դիմագիծ ունեցող այս երկու զտարյուն մեծ քնարերգուներին միավորում են նրանց ծննդյան թիվն ու ամիսը, որ այլ բան չէ, քան ճակատագիր: Հովհաննես Շիրազի ծնունդը պաշտոնապես գրանցված է 1914 թ. ապրիլի 26 (հայտնի են նաև ոչ պաշտոնական այլ տարեթվեր), իսկ Համո Սահյանինը՝ 1914 թ. ապրիլի 14: Մեկը ծնվել և մեծացել է Գյումրի քաղաքում, մյուսը՝ Սիսիանի Լոր գյուղում՝ խոսվածքով, ավանդույթով ու բնաշխարհով միանգամայն տարբեր գոտիներ:

Դժվար կյանքի բերումով Շիրազի մանկությունն անցավ մանկատանը, որտեղից փախավ և համալրեց շուկաների շուրջը թափառող անապաստանների շարքերը: Համո Սահյանը մեծացավ գյուղում. դժվար տարիներ էին, նոր երեխայի ծնունդը նաև հոգս էր. մի ուտող բերան էլ ավելացավ: Նա էլ ինքնուրույն կյանքով ապրեց, գյուղից հեռացավ, սովորեց ու աշխատեց Բաքվում, որտեղից էլ՝ որպես ծովային, կամավոր մեկնեց գործող բանակ՝ ծառայությունն անցնելով Սև ծովի նավատորմում: Շիրազը ուշ տարիքում դարձավ դպրոցական, դպրոցից մուտք գործեց Գյումրիի մանածագործարան և տեղի թերթում էլ տպագրեց իր առաջին բանաստեղծությունը: Հետո արդեն տեղափոխվեց Երևան, որտեղ 1935-ին լույս տեսավ «Գարնանամուտ» ժողովածուն, իսկ նա՝ արդեն անվանի բանաստեղծ, դարձավ համալսարանի ուսանող: 1940-ին լույս տեսավ նրա «Երգ Հայաստանի» մեծադիր ժողովածուն, որին հաջորդեցին նրա երեք բացառիկ գրքերը՝ «Բանաստեղծի ձայնը» (1942), «Երգերի գիրք» (1942), «Լիրիկա» (1946): Հաջորդեցին «Քնար Հայաստանի» ժողովածուի երեք գրքերը (1958, 1964, 1974), և համաժողովրդական բանաստեղծի փառքն այլևս չլքեց նրան:

Սահյանը թեև ստեղծագործում էր 1930-ականներից, բայց այդ տարիների թվագրությամբ հայտնի է մի քանի գործ, և նա գրականություն մտավ Շիրազից ավելի քան տասը տարի ուշ՝ 1946-ին, «Որոտանի եզերքին» վերնագրված բանաստեղծությունների գրքույկով: Հետո Սահյանի ճանապարհը փակեց հետպատերազմյան տարիներին մինչև Ստալինի մահը մոլեգնող սոցիալիստական ռեալիզմից սերված կյանքի գունազարդման և անկոնֆլիկտայնության հակագրական տեսությունը, նա հրատարակեց երեք գիրք՝ «Առագաստ» (1947), «Սլացքի մեջ» (1950), «Ծիածանը տափաստանում» (1953), որոնց կապակցությամբ հետո գրեց, որ դրանց համար ամաչում է: Ինքը խոստովանեց, մյուսներն այդ սխալն արեցին, բայց հրապարակավ չզղջացին: Այդ հարվածից հետո՝ 1950-ական թթ. կեսերից, գեղարվեստական գրականությունը զարգացավ իր ներքին հնարավորությունների վերականգնման ճանապարհով, և արդյունքը տեսանելի էր: Սահյանը նոր հունի մեջ ընկավ «Բարձունքի վրա» (1955) և «Նաիրյան դալար բարդի» (1958) ժողովածուներով, որից հետո նրա ճանապարհը բաց էր դեպի իր աշխարհ՝ դեպի հայրենի տուն ու հայրենի բնաշխարհ: Դրանից հետո՝ սկսած «Մայրամուտից առաջ» (1963) ժողովածուից մինչև հետմահու տպագրված «Ինձ բացակա չդնեք» (1998) վերջին գիրքը, նրա պոեզիան հորդեց վարար աղբյուրի պես: Այս ընթացքում Սահյանը հրատարակեց մեկը մյուսին շարունակող ու լրացնող բազմաթիվ ժողովածուներ, հատընտիրներ, հատորյակներ ու երկհատորյակներ և իր հաստատուն տեղն ապահովեց հայ պոեզիայի ընթացքի ու պատմության մեջ: Սահյանը՝ որպես բանաստեղծ, սիրվեց և ընդունվեց ընթերցողի կողմից, իսկ ընթերցողի սերը հենց բանաստեղծի փառքի իսկական պատվանդանն է:

Այսպես կողք կողքի երևանը զարդարում էին երկու տարեկից բանաստեղծներ: Միայն մուսաներին հայտնի զարմանալի մի օրինաչափությամբ Շիրազի պոեզիան շողարձակեց նրա կյանքի առաջին 50, իսկ Սահյանինը՝ 50 տարեկանից հետո: Սա՝ որպես ընդհանուր դիտարկում, թեև Շիրազը դեռևս պետք է փայլատակեր «Հուշարձան մայրիկիս» ժողովածուի նոր հրատարակություններով, իսկ հետմահու պետք է լույս տեսներ «Հայոց դանթեականը» (1990) կոթողային պոեմը, որ գրել էր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում: Դեռ ավելին, հետմահու պետք է լույս տեսներ նաև նրա անտիպ հատորաշարը, որից այս պահին ընթացքի մեջ է հինգերորդ հատորը, որն ամենևին էլ ո՛չ վերջինն է, ո՛չ նախավերջինը: Շիրազի պոեզիան դեռևս լրացվում ու ամբողջանում է:

Իսկ Սահյանը որքան էլ հասուն տարիքի բանաստեղծ էր, այնուամենայնիվ նրա գրական հիմքերն առաջին իսկ գրքում էին՝ այնտեղ՝ Որոտանի եզերքին: Բնաշխարհի իր այդ ինքնատիպ եզերքով Սահյանն ստեղծեց մի ամբողջ աշխարհ, որ Զանգեզուրն է՝ Սյունյաց երկիրը: Սահյանի բնաշխարհը շատ տեղային է ամեն ինչով, և այն հնարավոր չէ շփոթել Հայաստանի մեկ այլ վայրի հետ:

Զարմանալի էր նրանց գրական հարաբերությունը: Գրական միջավայրում, կենցաղում իրարից հեռու էին, բայց մեկի կողմից ասվող, մյուսի կողմից չասվող ներքին գնահատությունը կար: Մի բանաստեղծության մեջ Սահյանը դիմում է նրան և փոխաբերաբար ասում՝ Շիրա՛զ, դու անտառ ես, թո՛ւյլ տուր քո անտառի եզերքին խշշա նաև իմ դալար բարդին: Շիրազը, իբր, թույլ չի տալիս, ասում է՝ չէ՛, կկտրեմ… Սա, իհարկե, պետք է ընդունել որպես գրական շարժ՝ ասված ոչ թե Շիրազի կողմից, այլ հենց իր՝ Սահյանի:

Այն, որ Շիրազը երգիծում էր իր ժամանակակից գրողներից շատերին, նրանց կպցնում սրամիտ ծաղրական անուններ, հայտնի է, իսկ Սահյանի կապակցությամբ ոչ մի բացասական խոսք չասաց: Իր հերթին Սահյանը Շիրազի պաշտամունք ուներ, մահախոսականի մեջ նրան համարեց առանձնահատուկ գրական ու մարդկային երևույթ, առասպել ու լեգենդ: Ասենք նաև, որ շատ սրամիտ էր նաև Սահյանը, որ պահպանվել է նրա թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում:

Եվ, իրոք, Շիրազն առասպել էր. Մաշտոց-Ամիրյան փողոցների անկյունում կանգնում էր իր տան առաջ, մարդիկ տեսնում, թեքվում էին դեպի նա և հարգանքով խոնարհաբար ողջունում նրան: Իսկ կանգառում ժամանակավորապես անշարժանում էին բոլոր տեսակի փոխադրականները, և մարդիկ, մեքենաների դռներից ու պատուհաններից իրար ցույց տալով, նույն հպարտությամբ ասում էին. այ, տե՛ս, իսկական Շիրազն է:

Սահյանը զուսպ էր, գիտեր՝ փառքի հետևից պետք չէ գնալ, ինքը կգա: Ինչպես Շիրազի, այնպես և իր դեպքում այդպես էլ եղավ: Սահյանն իր մեծարումը՝ գրախոսություններ, հանդեսներ, քննարկումներ, հանդիպումներ, պարբերական հոբելյաններ հատուկ չկազմակերպեց, բայց Սահյան կարդացողների, հասկացողների և գնահատողների թիվը գրքից գիրք ավելանում էր:

1950-1960-ականներին եղավ մի շրջան, երբ պաշտոնական քննադատության սլաքները գրողների միությունից ուղղվեցին Շիրազի դեմ՝ էլ կրոնախև, էլ ազգայնամոլ, էլ կյանքից կտրված… Շիրազը տոկաց և դիմացավ… առանց գրողների միություն մտնելու: Իրեն քննադատողներն այսօր հիշվում են միմիայն այդ սև հետագծով, իսկ ինքը իր ժողովրդի հավերժական անուններից է:

Սահյանն արտաքուստ հանդուրժող և համբերատար կեցվածքով, որ նույնն է, թե հավասարակշռված նիստուկացով շփվեց օրվա տերերի հետ, բայց ներքուստ իր բայն ասաց նախ՝ «Չէ՛, քո առջևն առնել շատ է անհնարին…» («Քարափների երգը», 1968, էջ 142), այնուհետև՝ «Ու եղավ ստի հրավառություն…», «Աղոթեմ» («Ինձ բացակա չդնեք», 1998, էջ 27, 151) բանաստեղծություններով: Շիրազն անկախությունը չտեսավ, Սահյանը տեսավ և իմաստուն պահվածքով հեռու մնաց քաղաքական գայթակղություններից:

Գրողի հարատևության գաղտնիքներից մեկն էլ այն է, թե որքանով են հանրակրթական և բարձրագույն դպրոցներում դառնում ծրագրային հեղինակ: Սա բարձրագույն գնահատություն է, որովհետև գրողը դառնում է իր ժողովրդի հոգևոր պատմության մասն ու մասնակիցը: Հիմա երկուսն էլ պատմության մեջ են և իրենց գրքերի էջերից հին ծանոթի պես ձեռքով են անում ընթերցողներին, իսկ դասագրքերից ողջունում աշակերտներին, ովքեր պատմում են իրենց կենսագրությունը և անգիր արտասանում իրենց բանաստեղծությունները: Ակնհայտ է այն հոգևոր մեծ ժառանգությունը, որ նրանք թողեցին իրենցից հետո:

Հովհաննես Շիրազի գեղարվեստական ճանաչողության հիմքերը հայոց տոհմիկ բառ ու բանի խորքում են՝ այնտեղ, որտեղ «Վահագնի ծնունդի» քրմական ասքն է, հեթանոսական և քրիստոնեական ամբողջ բանահյուսությունը, միջնադարյան հոգևոր և աշխարհիկ տաղերգությունը, հետո նաև Գյումրվա կենդանի խոսքն ու զրույցը, սրամտությունն ու լեզվից թռչունի պես միանգամից թռչող իմաստուն խոսքը: Նրա ստեղծագործական աշխարհը հայն է ու Հայաստանը: Այստեղ նախ հայ մարդն է իր «Բիբլիական» ծնունդով ու առաքելությամբ, իր «Դանթեական» ճակատագրով, իր սիրո հեթանոս գիշերներով: Այստեղ ամբողջ Հայոց աշխարհն է իր հին ու նոր պատմությամբ, իր պատմությանը դեմք ու դիմագիծ տված դեմքերով, իր Արարատով ու Անիով, հայոց անլուր ցեղասպանությամբ և երկրի տարածքների կորստի հիշողությամբ, իր կառուցումով ու Սփյուռքով, իր լեզվով ու մշակույթով, իր բնաշխարհով ու տեղանուններով, իր գոյաբանությամբ ու վաղվա հույսերով: Այս բացվող, ծավալվող հսկայական նյութը Շիրազը բանաստեղծության ու պոեմի էր վերածում գեղարվեստական ինքնատիպ պատկերներով, բազմաքանակ նորաբանություններով, ներշնչանքի մեջ ասես տիեզերական միգամածությունը խտացնում և կերտում էր հոգու մի նոր եզերք: Տեղ-տեղ նրա պատկերներն ասես կրում են աշխարհաստեղծման արարչությունը: Համոզվելու համար պետք է ընդամենը կարդալ նրան:

Համո Սահյանն առաջին հերթին եկավ իր բնաշխարհից, այդտեղից վերցրեց թե՛ իր նյութը, թե՛ այդ նյութը ներկայացնելու ձևը: Նա լսեց բնության ձայնը, սովորեց բնության լեզուն և իր ժամանակն ու իր ժամանակի մարդուն տեսավ բնության այդ հավերժական ժամանակի մեջ: Դեպի բնաշխարհ տանող ճանապարհին նա հանդիպեց Հովհաննես Թումանյանին, հոգեպես հաղորդակցվեց նրա հետ և դարձավ նրա դժվար շարունակվող ավանդույթների կրողն ու շարունակողը: Բնաշխարհը նրան տվեց ոչ միայն իր քար ու քարափի ամրությունը, այլև շողի ու ցողի նրբությունը: Այստեղ էլ նա հայտնաբերեց ի՛ր Հայաստանը՝ իր պատկերներն ու գույները, իր բառ ու բանը: Մի ամբողջ գունավոր շարժանկար է՝ հայ մարդը իր բնաշխարհում, իր ամենօրյա աշխատանքի մեջ, իր գերդաստանում, իրիկնահացի սեղանի շուրջը, մեծի ու փոքրի իր հարաբերություններում: Անպակաս են քարաքոսի ու մամուռի, դաղձի ու սամիթի, նոր թխած լավաշ հացի և արևի տակ փռած չորացող մրգերի հոտերը, համերն ու բույրերը: Սա ոչ թե նահապետական աշխարհ է, այլ ապրած կյանքի մի ժամանակը, որ հիմա հեռացող հայրական տան պես ճեղք է տալիս ու քանդվում: Բայց ամեն ինչ ոչ միայն կորչող ժամանակ չէ, այլև ամեն գարնան հետ նորոգվող խնկահոտ, որտեղ շնչում են ոչ միայն ծառն ու ծաղիկը, այլև քարն ու քարափը և վերածվում քարե պատարագի:

Շիրազի ժառանգությունը՝ տպագիր և անտիպ ամբողջ ստեղծագործությունը, մեծ ու փոքր պոեմները, տարաբնույթ բանաստեղծությունները, առակներն ու քառյակները մի մեծ հոգևոր ամբողջություն են, որ սպասում են իրենց ներհուն ուսումնասիրողին:

Սահյանի ամբողջ վաստակն իր գրքերում է: Անտիպ էջեր չի թողել: Նրա ժառանգությունը ևս կարիք ունի նոր ու խորքային ուսումնասիրության: Նրա հիմքերը խորանում են ոչ միայն դեպի Թումանյան, Տերյան ու հայ միջնադարյան և՛ տաղերգություն, և՛ մանրանկարչություն, այլև դեպի չինական պեյզաժային պոեզիա, որտեղ լեռն է, ճանապարհն է, անցորդն է ու իր բախտը…

Մեր առջև են իրենց 110-ամյակը բոլորած երկու մեծ բանաստեղծներ, որոնցից յուրաքանչյուրի հայելային անդրադարձը, այս արագ փոխվող ժամանակների բոլոր բեկումներով հանդերձ, պահպանում է նրանց նույնականությունն ու պատմական նշանակությունը:



Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Արվեստի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԵԳԵՆԴ ԴԱՐՁԱԾ ԿՅԱՆՔ



Արևմտահայ նշանավոր գրող, բժիշկ Ռուբեն Սևակը ծնվել է 1885 թ.: 1911 թ. ավարտել է Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1915 թ. վերադարձել է Կոստանդնուպոլիս, աշխատել է որպես բժիշկ, ապա զորակոչվել է գործող բանակ: Ձերբակալվել է և հայ մտավորականների հետ աքսորի ճանապարհին նահատակվել: Այս հրապարակումը նվիրված է նրա կյանքի վերջին օրերին:

...Երբ երիտասարդ Ռուբեն Սևակը հայտնվեց Կոստանդնուպոլսում, խորագիտակ ու զգայուն, մարդասեր բժշկի համբավն անմիջապես տարածվեց քաղաքում և մերձակա բնակավայրերում: Նրա բժշկական օգնությանն էին դիմում ոչ միայն հայ և այլ քրիստոնյա անձինք, այլև Գերմանիայում ուսած բազմաթիվ երիտթուրքերի ընտանիքների անդամներ: Ռուբենը միանգամից ու միաժամանակ վաստակեց իր հաճախորդների երախտագիտությունն ու խորին հարգանքը և հեքիմական մեթոդներով բուժող թուրք բժիշկների անթաքույց ատելությունը: Հակառակորդները բազում էին ու անողոք: Պարզ չէ, թե ինչ կերպ նրանք վրեժխնդիր կլինեին Սևակից, եթե նա չզորակոչվեր գործող բանակ՝ որպես զինվորական բժիշկ: Պատմությունն այստեղ էլ կրկնվեց. Սևակը կարճ ժամանակում արժանացավ վիրավոր և հիվանդ զինվորականների, այդ թվում նաև՝ հրամկազմի համակրանքին ու հարգանքին և իր գործընկերների թունավոր նախանձին: Շուտով վերջիններս, ակնհայտ խարդավանք հյուսելով, հագուրդ տվեցին իրենց վրիժառությանը: Ռազմաճակատում մահացու վիրավորված թուրք փաշայի՝ արդեն դիակնացող մարմինը դնելով վիրահատական սեղանին՝ ատելությունից եռացող թուրք հեքիմները բացահայտ սպառնալիքով հոխորտացին.

- Շատ ես գոռոզանում Եվրոպայում ստացած քո կրթությամբ, էրմենի՛ դոխտուր, հիմա փրկի՛ր ալլահի զավակ մեր փաշային, այլապես կփտես զնդանում:

Շատ լավ հասկանալով, թե ինչ են որոշել անել անգետ գործընկերները՝ Ռուբենը համարձակ պատասխանում է.

- Ես ո՛չ մեր Քրիստոսն եմ, ո՛չ էլ ձեր ալլահը, որ անհույս վիրավորին կենդանացնեմ, սակայն Հիպոկրատին տված երդումին հավատարիմ՝ կանեմ ամեն ինչ՝ նրա օրհասի տառապանքները թեթևացնելու համար:

- Ի՞նչ ես դուրս տալիս, գյավո՛ւր, որոշել ես սպանե՞լ փեյղամբարի ընտրյալին,- գոչում են դավադիրները և անմիջապես պարեկների ջոկ կանչում և ձերբակալել տալիս Սևակին:

Օրեր անց նա տարագրվող հայ մտավորականների՝ Կոմիտասի, Վարուժանի, Սիամանթոյի և մյուսների հետ գաղթի ճանապարհին էր...

Երբ աքսորյալների՝ քաղցից ու ծարավից տանջահար խումբը հազիվ առաջ էր շարժվում մի կիրճով, հանկարծ նրանց խմբի դեմ է դուրս գալիս լավ զինված հաղթանդամ քրդերի մի ջոկատ: Բոլորից առաջ ձիու վրա նստած էր պատկառելի արտաքինով ճերմակահեր առաջնորդը: Նա խրոխտ, բամբ ձայնով հրամայում է.

- Եթե մեջներդ դոխտուր կա, թող առաջ գա: Սևակն առաջ է գալիս՝ ձեռքին բժշկական պայուսակը, որ զարմանալիորեն թուրքերը նրանից չէին խլել: Ծերունին ասում է, որ ծանր հիվանդ ունի և առաջարկում է Սևակին ձի նստել: Ջոկատը շարժվում է դեպի ալպիական բարձունքները: Առաջնորդը, որ իր ցեղի և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր ղեկավարն էր միաժամանակ, պատմում է, որ ինքը հզոր և մեծ քրդական մի ցեղախմբի առաջնորդն է, բայց դժբախտ է, քանի որ միջցեղային, թուրքերի և այլ ազգերի հետ հաճախակի ռազմական ընդհարումների պատճառով իր բազմանդամ ընտանիքից մնացել են միայն ինքն ու իր տասնյոթամյա գեղանի թոռնուհին: Բայց նա էլ ինչ-որ հիվանդությունից տկարացել է, իսկ այս վերջին օրը ուշակորույս զառանցում է ու բարձր ջերմության մեջ վաղամեռիկ մորն է կանչում:

Բուրյան կանաչով, բուրումնավետ ծաղիկներով ծածկված բարձունքի վրա խփված էին բազմաթիվ վրաններ, դրանցից մեկուսի կանգնած էր գունագեղ, մետաքսահուռ, զարդարված մի շքեղ վրան: Հենց այդ վրանում էլ պառկած էր դեռատի քրդուհին: Նա հազիվ էր շնչում:

...Սևակը վիրահատեց աշխարհին անհաղորդ քնած դշխուհուն: Վիրահատությունը հաջող անցավ: Հիվանդը կռվում էր կյանքի ու մահվան միջև: Ողջ ցերեկը Սևակը նրա հետ միասին կռիվ էր տալիս հանուն կյանքի: Վերջապես երեկոյան աղջիկը բացեց պղտորված աչքերը: Ծեր քուրդը հուզախառն ձայնով ասաց.

- Դու երկնային փրկարար ես: Այսօր երեք մարդու կյանք փրկեցիր: Նկատելով Սևակի զարմացախառն հայացքը՝ հավելեց.

- Այո՛, մի՛ զարմացիր: Դեռևս ճանապարհին ես ուխտել էի, որ եթե թոռնիկս չփրկվի, քեզ պիտի մատաղ անեի նրա գերեզմանին, իսկ քանի որ նրանից հետո իմ կյանքն էլ անիմաստ պիտի լիներ, ինքնասպան պիտի լինեի: Այնպես որ դու երեքիս էլ փրկեցիր...

- Թոռնիկս, որ ինչպես տեսնում ես, հուրի-փերի է, սովորում է Պոլսի ֆրանսիական քոլեջում: Իմ ցեղախմբում նրան արժանի որևէ մեկը չկա: Դու կրթված ու լավ մարդ ես: Քեզ և քո ընկերներին մահ է սպասվում: Ուզում եմ մի առաջարկ անել: Հայերիդ համառության մասին գիտեմ, խնդրում եմ առերես դավանափոխ լինես և դառնաս գեղեցկուհի թոռնուհուս ամուսինը: Նրա հետ կժառանգես իմ իշխանությունն ու անբավ հարստությունը:

Սևակը հրաժարվում է, և որքան էլ ծերունին պնդում է, չի համոզվում, այլ խնդրում է ծերունուն, որ իրեն մի ձի տա, որ հասնի իր բախտակից ընկերներին: Ծերունին դարձյալ փորձում է համոզել և հետ պահել նրան անխոհեմ քայլից, բայց Սևակն ասում է, որ հայերը մի ասույթ ունեն՝ «Ընկերովի մահը հարսանիք է», և եթե ինքը Վարուժանի, Սիամանթոյի և մյուսների հետ լինի, գուցե նրանք համեմատաբար թեթև տանեն անողոք մահը: Ծերունին խոր ափսոսանքով կատարում է Սևակի խնդրանքը: Ընդամենը ժամեր անց Սևակը ևս նահատակվում է իր հոգեկից ընկերների հետ մի ամայի, անմարդաբնակ վայրում:

Որոշ կրճատումներով արտատպվում է «Հետաքրքրաշարժ պատմություններ, փաստեր հայ մեծերի ու Հայաստանի մասին» գրքից

ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ

Լեհ նշանավոր հասարակական գործիչ, արևելագետ, հրապարակախոս և գրող Բոգդան Գեմբարսկին (1905-1978) մեծ ներդրում ունի հայոց մշակույթի և պատմության հանրայնացման գործում: Նա Մեծ եղեռնին և Հայ դատին նվիրված հոդվածների հեղինակ է, թարգմանաբար հրատարակել է Հ. Շիրազի «Բիբլիականը», պայքարել է Հայկական հարցի արդարացի լուծման համար, դասախոսություններ է կարդացել հայ գրականության վերաբերյալ: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի օրհնությամբ Բոգդան Գեմբարսկու գերեզմանին տեղադրվել է սպիտակ մարմարե խաչքար:

Ընթերցողին ենք ներկայացնում մեր ժողովրդի մեծ բարեկամ Բոգդան Գեմբարսկու մտքերից:

«Թուրքերն իրավունք չունեն օգտվելու հայկական հողերից, քանի որ տիրացան դրանց մարդասպան ճանապարհով, այսինքն՝ մարդկության դեմ ոճիր գործելով: Այն փաստը, որ մինչև հիմա նրանք օգտվում են այդ հողերից, սարսափելի հակասում է արդարության տարրական հիմունքներին. չէ՞ որ դա պարգև է մարդասպանության համար:

Հայերը բարոյական լիակատար իրավունք ունեն պահանջելու վերադարձնել այդ ամբողջ տարածքը, որը եղել է նրանց հայրենիքը, երբ ասպարեզում ո՛չ թուրքեր են եղել, ո՛չ անգլիացիներ, ո՛չ լեհեր...

Թուրքական կառավարությունը թող մի կողմ չքաշվի՝ հայտարարելով, թե արդեն գոյություն ունի հայկական մի պետություն, հետևաբար՝ չկա հայկական մի այլ պետություն ստեղծելու անհրաժեշտություն: Հայաստանը կազմում է նախկին Արևելյան կամ Պարսկահայաստանի մի մասը: Դա ոչ բարեբեր լեռնային փոքրիկ երկիր է (29,8 հազար քառակուսի կիլոմետր), որն արդեն իսկ ի վիճակի չէ տեղավորելու ամբողջ հայությանը: Դա պատմական Հայաստանի ընդամենը 10 տոկոսն է, իսկ նրա սահմաններից դուրս (ներքին և արտաքին Սփյուռքում) դեռևս ապրում են միլիոնավոր հայեր»:

ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՌ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Նորընտիր Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսին է այցելում եղեռնապուրծ ծերունազարդ մի հայ մամիկ և համբուրելով նրա աջը՝ հանձնում է մի ծանր ու մեծ քսակ՝ ոսկով, ադամանդով, թանկագին քարերով:

1915 թվականի ջարդին՝ թուրքերի հարձակման ժամանակ, գլխին հասցրած հարվածից ուշագնաց է եղել: Երբ ուշքի է եկել, տեսել է հարազատների մի մասի դիակները, իսկ մյուսներն անհետացել էին: Տան գաղտնարանից վերցնելով թանկարժեք զարդերով լի քսակը՝ նա, ցերեկները թաքնվելով, գիշերները քայլելով, հասել է Էջմիածին:

Երկար տարիներ որոնել է՝ գեթ մի հարազատ գտնելու հույսով, սակայն ապարդյուն: Այժմ բերել է այս գանձը՝ վստահելու կաթողիկոսին: Եթե կհայտնվի իր տոհմից որևէ մեկը իր մահից հետո, թող կաթողիկոսը նրան մաս հանի գանձից, եթե ոչ, թող տնօրինի, ինչպես կուզի:

Շուտով ծեր կինը մահանում է: Կաթողիկոսը կազմակերպում է նրա թաղումը և մտածում՝ ինչպես տնօրինի այդ գանձը: Երկար խորհելուց հետո կանչում է հայտնի ոսկերիչ-ակնագործների և պատվիրում այդ գանձից պատրաստել հայոց այբուբենի տառերն ու մեր հավատի խորհրդանիշը՝ խաչը: Շնորհալի վարպետները կատարում են կաթողիկոսի պատվերը, և այդ օրվանից դրանք պահվում են վեհարանի գանձարանում:

Օտարազգի բազում նշանավոր հյուրեր են եղել այնտեղ և ապշած մնացել ու հիացած հայ ժողովրդի՝ իր գրի նկատմամբ ունեցած պաշտամունքից:

Նվեր ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի բարբառագիտության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, հայոց լեզվի պատմության և բառարանագրության բաժինների վարիչների թափուր տեղերի համար

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) լուսանկար,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,

թ) հրատարակված աշխատանքների ցանկ,

ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-53-37:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎՍԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 26.04.2024 թ.:

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА